

**ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ԴԱՍԸՆԹԱՑԻ**

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԱՇԱՐ
(հասարակագետների համար)**

1. Փիլիսոփայության ծագումը և զարգացման հիմնական փուլերը: Փիլիսոփայության առարկան. Փիլիսոփայությունը որպես աշխարհայացքի ձև:
2. Աշխարհայացքի էությունը և տեսակները: Փիլիսոփայությունն աշխարհայացքի համակարգում. Փիլիսոփայություն և կրոն:
3. Փիլիսոփայության տեղը գիտությունների համակարգում: Փիլիսոփայության իմացաբանական-մեթոդաբանական գործառույթը:
4. Փիլիսոփայական գիտելիքի առանձնահատկությունը: Փիլիսոփայության հիմնական բաժինները, դրանց ընդհանուր բնութագիրը:
5. Անտիկ փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը, պարբերացումը և հիմնական դպրոցները: Հին հունական փիլիսոփայության տիեզերակենտրոն բնույթը (կոսմոցենտրիզմը). Միլեթյան դպրոց (Թալես, Անաքսիմենես, Անաքսիմանդրես):
6. Էլեական դպրոց: Պարմենիդեսի գոյաբանական ուսմունքը: Զենոն Էլեացու ապորիաների գիտական և փիլիսոփայական նշանակությունը:
7. Հերակլիտեսի ուսմունքը կեցության մասին: Հին հունական ատոմիզմի ընդհանուր բնութագիրը (Լևկիպ, Դեմոկրիտ):
8. Սոկրատեսի էթիկական ռացիոնալիզմը՝ «Գիտելիքը առաքինության հիմքն է»:
9. Պլատոնի օբյեկտիվ իդեալիզմը. ուսմունքը *Էյդոսների* մասին և դրա, իմացաբանական յուրահատկությունը (*վերնուշի* հայեցակարգը):
10. Արիստոտելի փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը: Պլատոնյան գաղափարների քննադատությունը և իմացության տեսությունը:
11. Դավիթ Անհաղթի նեոպլատոնական փիլիսոփայությունը:
12. Միջնադարյան փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը: Նոմինալիզմի և ռեալիզմի վեճը: «Երկակի ճշմարտության» տեսությունը (Թ.Աքվինացի և ուրիշներ):
13. Անանիա Շիրակացու բնագիտական փիլիսոփայությունը:
14. XVII դ. գիտական հեղափոխությունը և փիլիսոփայությունը: Ռացիոնալիզմի և էմպիրիզմի երկրնտրանքը: Էմպիրիզմի էվոյուցիան (Ֆ.Բեկոն, Ջ.Բերկլի, Դ.Հյում):
15. Ռացիոնալիզմի զարգացումը Ռ.Դեկարտի, Բ.Սպինոզայի և Գ.Լայբնիցի ուսմունքներում:
16. Կանտի իմացության տեսությունը: Սուբյեկտ և օբյեկտ հասկացությունների վերաիմաստավորումը: «Ինքնին իրի» ուսմունքը:

17. Ի. Կանտի բարոյագիտական ուսմունքը: «Կատեգորիկ իմպերատիվի (հրամայականի)» իմաստը և նշանակությունը մարդու կյանքում:
18. Գ. Հեգելի բացարձակ իդեալիզմը: Աշխարհն իբրև ինքնազարգացող բանականություն: Դիալեկտիկական մեթոդի էությունը:
19. Մարքսիզմի փիլիսոփայությունը. դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմնադրույթները:
20. XIX դարի իռացիոնալիզմը. Ա. Շոպենհաուեր. աշխարհը որպես կամք և պատկերացում: Ֆ. Նիցշե. դասական փիլիսոփայության արժեքների վերագնահատումը և «Գերմարդու» հայեցակարգը:
21. XX դարի փիլիսոփայության հիմնական միտումները և ուղղությունները: Սցիենտիզմ և հակասցցենտիզմ: Մետաֆիզիկայի մերժումը:
22. Պոզիտիվիզմի և նեոպոզիտիվիզմի հիմնական սկզբունքներն ու էվոյուցիան:
23. Ռացիոնալի և իռացիոնալի, մարդկային գոյության պրոբլեմը էկզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ (Հայդեգեր, Յասպերս, Սարտր, Քամյու և այլն):
24. Ետդասական փիլիսոփայության ընդհանուր բնութագիրը (հերմենևտիկա, ֆենոմենոլոգիա, պոստմոդերն):
25. Կեցության հիմնահարցը փիլիսոփայության մեջ: Կեցության կառուցվածքը և ձևերը: Կեցության ըմբռնումը դարի փիլիսոփայական ուսմունքներում (Մ. Հայդեգեր, Ժ. Պ Սարտր):
26. Կեցություն և սուբստանցիա (նախահիմք): Փիլիսոփայական մտածողությունը նախահիմքի որոնումներում:
27. Աշխարհի բազմազանության և միասնության հիմնահարցը փիլիսոփայության մեջ. Մոնիզմ, դուալիզմ, պլյուրալիզմ:
28. Մարդու և աշխարհի, կեցության և գիտակցության փոխհարաբերության հարցը փիլիսոփայության մեջ:
29. Կեցության կապերի վերլուծությունը և տիպաբանությունը: ՈՒՆԻՎԵՐՍԱԿԱԿԱՅ. էություն և երևույթ, եզակի և ընդհանուր զույգ փիլիսոփայական կատեգորիաները:
30. Կառուցվածքային կապ. ձև և բովանդակություն, մաս և ամբողջ զույգ կատեգորիաները:
31. Դետերմինիզմի սկզբունքը և դրա տեղը մարդու կեցությային դաշտում. պատճառականություն, անհրաժեշտություն և պատահականություն, հնարավորություն և իրականություն, հավանականություն կատեգորիաները:
32. Տարածությունն ու ժամանակը որպես կեցության համընդհանուր հատկություններ, դրանց հիմնական փիլիսոփայական համադրույթները (սուբստանցիոնալիզմ և ռեյացիոնիզմ):
33. Շարժման հիմնախնդիրը փիլիսոփայության համակարգում: Շարժում և զարգացում:
34. Գիտակցության հիմնահարցը պատմափիլիսոփայական ավանդույթում: Գիտակցության կառուցվածքը:

35. Գիտակցություն, ինքնագիտակցություն և անգիտակցական. Դրանց փոխհարաբերությունը մարդու հոգեկանում:
36. Զ.Ֆրեյդի ուսմունքը գիտակցության կառուցվածքի մասին:
37. Մտածողություն և լեզու: Լեզվի հաղորդակցական ֆունկցիան: Բնական և արհեստական լեզուներ: Գիտության լեզու:
38. Ճանաչողությունը որպես փիլիսոփայական վերլուծության առարկա: Ճանաչողության կառուցվածքը և գոյաբանական հիմքերը:
39. Իրականության ճանաչման հնարավորության հիմնահարցը փիլիսոփայության մեջ:
40. Ճանաչողության հիմնական ձևերը. առօրյա, գեղարվեստական, գիտական: Ճանաչողության սուբյեկտի և օբյեկտի հիմնահարցը փիլիսոփայության մեջ:
41. Հումանիտար ճանաչողության առանձնահատկությունը: Բացատրություն, մեկնաբանություն, ըմբռնում:
42. Զգայական իմացությունը և դրա ձևերը: Մենսուալիզմի իմացաբանական հիմքերը:
43. Ռացիոնալ ճանաչողությունը և դրա ձևերը: Ռացիոնալը և իռացիոնալը մարդկային ճանաչողությունում:
44. Ճշմարտության հիմնահարցը փիլիսոփայության մեջ. ճշմարտություն, մոլորություն, կեղծիք: Ճշմարտության օբյեկտիվությունը:
45. Բացարձակ և հարաբերական ճշմարտություն. դոգմատիզմ և ռելյատիվիզմ:
46. Ճշմարտության հայեցակարգերը և ճշմարտության չափանիշի հիմնահարցը իմացության տարբեր բնագավառներում: Պրակտիկայի փիլիսոփայական ըմբռնումը. պրակտիկան որպես ճշմարտության չափանիշ:
47. Իմացաբանական մոդելները և դրանց նշանակությունը աշխարհընկալման գործում:
48. Գիտություն և գիտական ճանաչողություն հասկացությունը : Գիտական ճանաչողության էմպիրիկ և տեսական մակարդակները. գիտական ճանաչողության հիմնական մեթոդներն ու ձևերը:
49. Գիտական տեսության կազմավորումը, տեսական գիտելիքի աճը: Գիտական գիտելիքի հիմնավորման պրոբլեմը: Փաստարկման էությունն ու տիպերը:
50. Աշխարհի գիտական, կրոնական և փիլիսոփայական պատկերների հարաբերակցությունը:
51. Մարդու ծագման հիմնահարցը (անթրոպոսոցիոգենեզ). մարդը իբրև սոցիալականի և կենսաբանականի միասնություն:
52. Մարդը իբրև անհատ, անհատականություն և անձնավորություն: Մարդու ազատության և պատասխանատվության փիլիսոփայական ըմբռնումները:
53. Հասարակության սահմանումը: Հասարակության սոցիալական կառուցվածքը, հիմնական տարրերը:
54. Հասարակությունը որպես ինքնազարգացող համակարգ: Հասարակական զարգացման տեսությունները: Հասարակական կյանքի զարգացման չափանիշի հիմնահարցը:

55. Հասարակությունը և բնությունը: Ժամանակակից բնապահպանական հիմնահարցերը: Էկոհումանիզմ:
56. Հասարակության զարգացման ֆորմացիոն և քաղաքակրթական ուսմունքները: Քաղաքակրթությունների ապագայի խնդիրները:
57. Մշակույթի փիլիսոփայական ըմբռնումը. մշակույթ և քաղաքակրթություն:
58. «Լոկալ» քաղաքակրթությունների տեսությունները (Ա.Տոյնբի, Օ.Շպենգլեր և ուրիշներ):
59. Մշակույթների բազմազանությունը և միջմշակութային հաղորդակցման խնդիրները: Ազգայինը և համամարդկայինը հոգևոր մշակույթում:
60. Արժեք և արժեքային կողմնորոշում: Արժեքայինի տիպերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. [Ասատրյան Մ.Վ., Փիլիսոփայության ներածություն \(ուսումնական ձեռնարկ\), Երևան, 2004 թ.](#)
2. [Շաքարյան Հր., Փիլիսոփայություն \(ուսումնական ձեռնարկ\), Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005 թ.](#)
3. [Հակոբյան Ս.Ս., Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Երևան 2009 թ.](#)
4. [Հովհաննիսյան Հ.Օ., Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, «Նորա-վանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2002 թ.:](#)
5. [Զարարյան Ս., Փիլիսոփայության պատմություն, Երևան, Նաիրի հրատարակչություն, 2000 թ.](#)
6. [Միրումյան Կ., Անտիկ փիլիսոփայության ակնարկ, Երևան, Նոյան տապան, 1999 թ.](#)
7. [Фролов И. и др., Введение в философию: учебное пособие для вузов, М., 2007.](#)
[Фролов И. Т. и др., Введение в философию. Учеб. пособие для вузов, 3-е изд., Москва 2003 г.](#)
8. [Օլգերման Տ.Բ., Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ, Երևան, 1976 թ.](#)
9. Փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի բլոգ՝ <https://chairoflogicphiloscult.wordpress.com>

Հաստատված է ամբիոնի թիվ 8 նիստում(17.03.2021թ.)
Ամբիոնի վարիչ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ